

#### **5.4. 2011 թվականի նոյեմբեր ամսվա շրջակա բնական միջավայրի աղտոտվածության մոնիթորինգ**

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության, հանրապետության շրջակա բնական միջավայրը 2011թ. նոյեմբերին ունեցել է հետևյալ բնութագիրը.

**5.4.1. Օդային ավազանի որակի մոնիթորինգ:** Նոյեմբերին հանրապետության մթնոլորտի աղտոտվածության որակի մոնիթորինգ իրականացվել է Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան և Արարատ քաղաքներում տեղակայված 14 դիտակայանների, Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Ծաղկաձոր, Վաղարշապատ, Աբովյան և Սևան քաղաքներում տեղակայված պասիվ նմուշառման 147 դիտակետերի, Երևան, Ալավերդի, Ծաղկաձոր քաղաքներում և Ամբերդ գյուղում տեղակայված ավտոմատ կայանների միջոցով: Ընդհանուր առմամբ վերցվել է օդի 43646 փորձանմուշ:

**Երևան քաղաքի** մշտական 5 դիտակայաններում ակտիվ նմուշառման եղանակով մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշվել են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և գետնամերձ օզոնի պարունակությունները: Ակտիվ նմուշառման միջոցով վերցվել է օդի 515 փորձանմուշ: Փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 2.2 անգամ, ազոտի երկօքսիդինը՝ 3.8 անգամ: Քաղաքի մթնոլորտային օդի փորձանմուշներում ավտոմատ կայանների միջոցով որոշվել են ածխածնի մոնօքսիդի, ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների և գետնամերձ օզոնի պարունակությունները: Ավտոմատ սարքի միջոցով ածխածնի մոնօքսիդի պարունակության որոշման համար կատարվել է օդի 13637, ծծմբի երկօքսիդի համար՝ 9276, ազոտի օքսիդների համար՝ 1377, գետնամերձ օզոնի համար՝ 840 դիտարկում: Ըստ ավտոմատ սարքերի տվյալների, մթնոլորտային օդի փորձանմուշներում ազոտի օքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 1.3 անգամ: Քաղաքի պասիվ նմուշառման 17 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 76 փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

**Գյումրի քաղաքի** մշտական դիտակայանում փոշու պարունակության որոշման համար վերցվել է օդի 26 փորձանմուշ: Փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 1.1 անգամ: Հոկտեմբեր ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան բարձրացել է 1.1 անգամ: Քաղաքի պասիվ նմուշառման 24 դիտակետերից ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները որոշելու համար վերցվել է օդի 192 փորձանմուշ: Ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

**Վանաձոր քաղաքի** մշտական 3 դիտակայաններում ակտիվ նմուշառման եղանակով մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները: Ակտիվ նմուշառման միջոցով վերցվել է օդի 179 փորձանմուշ: Ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 1.1 անգամ: Քաղաքի պասիվ նմուշառման 24 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 96 փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

**Այավերդի քաղաքի** մշտական 2 դիտակայաններում, ինչպես նաև ավտոմատ կայանում ակտիվ նմուշառման եղանակով մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները: Ակտիվ նմուշառման միջոցով վերցվել է օդի 180 փորձանմուշ: Ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 1.2 անգամ: Ավտոմատ սարքի միջոցով ածխածնի մոնօքսիդի պարունակության որոշման համար կատարվել է օդի 5072, ծծմբի երկօքսիդի համար՝ 2530, ազոտի օքսիդների համար՝ 829, գետնամերձ օդոնի համար՝ 831 դիտարկում: Ըստ ավտոմատ սարքի տվյալների, ավտոմատ կայանի հարակից տարածքի մթնոլորտային օդի փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 3.4 անգամ: Քաղաքի պասիվ նմուշառման 18 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 144 փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

**Հրազդան քաղաքի** մշտական դիտակայանում ցեմենտի փոշու պարունակության որոշման համար վերցվել է օդի 78 փորձանմուշ: Մթնոլորտային օդում ցեմենտի փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 1.9 անգամ, իսկ միանվագ առավելագույն կոնցենտրացիան՝ 2.2 անգամ: Հոկտեմբեր ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան նվազել է 1.5 անգամ: Քաղաքի պասիվ նմուշառման 12 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 48 փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

**Արարատ քաղաքի** մշտական դիտակայանում ցեմենտի փոշու պարունակության որոշման համար ակտիվ նմուշառման միջոցով վերցվել է օդի 30 փորձանմուշ: Մթնոլորտային օդում ցեմենտի փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 1.2 անգամ: Հոկտեմբեր ամսվա համեմատ ցեմենտի փոշու միջին ամսական կոնցենտրացիան նվազել է 2.1 անգամ:

**Ծաղկաձոր քաղաքի** պասիվ նմուշառման 14 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 56 փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում: Ավտոմատ սարքի միջոցով ածխածնի մոնօքսիդի պարունակության որոշման համար կատարվել է օդի 3572, ազոտի օքսիդների համար՝ 820, ծծմբի երկօքսիդի համար՝ 2401 դիտարկում: Ըստ ավտոմատ սարքի տվյալների, ավտոմատ կայանի հարակից տարածքի մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշված նյութերի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

**Վաղարշապատ, Արովյան և Մևան քաղաքների** պասիվ նմուշառման համապատասխանաբար 16, 12 և 10 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 94, 95 և 37 փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

**Ամբերդ գյուղում** ավտոմատ եղանակով վերցվել է օդի 80 և փոշու 28 փորձանմուշ: Օդի փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, ամոնիակի և նիտրատ իոնի, իսկ փոշու փորձանմուշներում՝ քլոր, նիտրատ, սուլֆատ, ամոնիում իոնների և 21 քիմիական տարրերի պարունակությունները: Մթնոլորտային օդում գետնամերձ օդոնի

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

որոշման համար անընդմեջ ռեժիմով կատարվել է 563 դիտարկում: Գետնամերձ օգոնի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ից բարձր է եղել 2.8 անգամ, իսկ ազոտի երկօքսիդի և ամոնիակի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Ամբերդ գյուղի ավտոմատ կայանի հարակից տարածքի տեղումներում (ձյուն) վերահսկվող նյութերի պարունակությունը, 2011թ. նոյեմբեր

մգ/դմ<sup>3</sup>

Ցուցանիշներ	Նմուշների վերցման ամսաթիվը						
	04	10	12	16	17	18	19
Ջրածնային ցուցիչ (pH)	6.03	6.89	6.66	6.33	5.85	6.29	6.30
Տեսակարար էլեկտրահաղորդականություն (μՍիմ/սմ)	15.1	50.1	43.6	26.1	17.2	24.4	43.6
Սուլֆատ իոն	0.928	1.420	0.620	2.858	2.663	1.880	4.036
Քլորիդ իոն	0.253	4.576	5.720	1.769	0.745	2.341	0.425
Նիտրատ իոն	2.603	2.734	0.996	1.655	1.340	1.629	3.979
Ամոնիում իոն	0.415	1.232	0.528	1.223	1.141	0.764	1.146

**5.4.2. Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգ:** Նոյեմբերին մակերևութային ջրերի նմուշառ կատարվել է հանրապետության 20 գետերի, Կեչուտի ջրամբարի և Երևանյան լճի 50 դիտակետերում: Վերցված 50 փորձանմուշներում որոշվել է 20-27-ական ցուցանիշ:

Մակերևութային ջրերի աղտոտվածության վիճակը, 2011թ. նոյեմբեր

Ջրային օբյեկտի անվանումը	Դիտակետի համարը	Դիտակետը (հատվածքը)	ՍԹԿ-ն գերազանցող միացությունների կոնցենտրացիաները					
			լուծված թթվածին (ՍԹԿ՝ > 6.0 մգ/դմ <sup>3</sup> )	թփոփ (ՍԹԿ՝ 3.0 մգ/դմ <sup>3</sup> )	թփոփ (ՍԹԿ՝ 30.0 մգ/դմ <sup>3</sup> )	նիտրիտ իոն (ՍԹԿ՝ 0.024 մգN/դմ <sup>3</sup> )	ամոնիում իոն (ՍԹԿ՝ 0.39 մգN/դմ <sup>3</sup> )	սուլֆատ իոն (ՍԹԿ՝ 100.0 մգ/դմ <sup>3</sup> )
Փամբակ	1	Հարթագյուղ գյուղից 0.5 կմ վերև	-	3.7	-	-	-	-
	2	ք.Սպիտակից 0.5 կմ ներքև	-	3.7	-	-	-	-
	3	ք.Վանաձորից 0.6 կմ վերև	-	3.4	-	-	-	-
	4	ք.Վանաձորից 4.5 կմ ներքև	-	3.3	-	0.116	6.022	-
Դերեղ	5	Մարցիգետի թափման կետից 0.5 կմ ներքև	-	3.3	-	-	-	-
	6	ք.Այրումից 0.5 կմ վերև	-	4.3	-	0.028	-	-
Չորագետ	8	ք.Ստեփանավանից 0.5 կմ վերև	-	3.4	-	-	-	-
	10	Գետաբերան	-	4.5	-	-	-	-
Մարցիգետ	13	Գետաբերան	-	4.3	-	-	-	-
Ախթալա	14	Գետաբերան	-	-	-	-	0.811	576.1
Աղստև	16	ք.Դիլիջանից 0.5 կմ ներքև	-	3.8	-	0.033	-	-
Գետիկ	19	ք.Ճամբարակից 0.5 կմ վերև	-	-	-	0.032	0.858	-
Արաքս	26	Հրազդան գետի թափման կետից վերև	-	-	-	0.061	-	158.9
	27	Հրազդան գետի թափման կետից ներքև	-	-	-	0.073	-	152.7
	29	ք.Ագարակից 2 կմ հարավ	-	4.3	44	-	-	196.3
	30	ք.Ագարակից 2.5 կմ հարավ-արևելք	-	4.4	34	-	-	197.6
Սևջուր	40	ք.Վաղարշապատից 10 կմ հարավ	-	-	-	0.118	0.589	259.4
	41	ք.Վաղարշապատից 11 կմ հարավ-արևելք	-	4.1	-	0.125	-	262.4
	42	Ռանչպար գյուղից 0.5 կմ ներքև	-	-	-	0.089	-	201.6

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Ջրային օբյեկտի անվանումը	Դիտակետի համարը	Դիտակետը (հատվածքը)	ՍԹԿ-ն գերազանցող միացությունների կոնցենտրացիաները					
			լուծված թթվածին (ՍԹԿ՝ > 6.0 մգ/դմ <sup>3</sup> )	ԹԿՊ <sub>5</sub> (ՍԹԿ՝ 3.0 մգ/դմ <sup>3</sup> )	ԹԿՊ <sub>1</sub> (ՍԹԿ՝ 30.0 մգ/դմ <sup>3</sup> )	նիտրիտ իոն (ՍԹԿ՝ 0.024 մգN/դմ <sup>3</sup> )	ամոնիում իոն (ՍԹԿ՝ 0.39 մգN/դմ <sup>3</sup> )	սուլֆատ իոն (ՍԹԿ՝ 100.0 մգ/դմ <sup>3</sup> )
Քասախ	46	ք.Աշտարակից 3.5 կմ ներքև	-	-	-	0.057	-	-
	47	Գետաբերան	-	3.8	44	0.035	-	-
Հրազդան	52	Քաղսի գյուղից 0.5 կմ ներքև	-	6.2	-	0.028	-	-
	53	Արգել գյուղից 0.5 կմ ներքև	-	5.3	-	-	-	-
	54	Արգնի ՀԷԿ-ից 0.5 կմ ներքև	-	4.4	-	0.071	-	-
	55	Դարբնիկ գյուղի մոտ	2.15	10.6	70	-	6.086	-
	56	Գետաբերան	5.30	-	68	0.105	0.528	131.3
Գետառ	59	Գետաբերան	-	4.4	62	0.183	0.835	-
Արփա	83	ք.Ջերմուկից 0.5 կմ վերև	-	3.8	-	-	-	-
	85	ք.Վայքից 0.5 կմ ներքև	-	3.7	-	-	-	-
	86	ք.Եղեգնաձորից 0.5 կմ վերև	-	3.7	-	-	-	-
Մեղրիգետ	90	Գետաբերան	-	3.3	-	-	-	-
Ողջի	92	ք.Քաջարանից 1.8 կմ ներքև	-	5.4	44	0.053	1.383	-
	94	ք.Կապանից 6.8 կմ ներքև	-	3.9	-	0.043	0.439	230.9
Արծվանիկ	96	Գետաբերան	-	-	-	0.094	1.221	496.4
Գեղի	98	Գետաբերան	-	3.9	-	-	-	-
Որոտան	102	Տաթև ՀԷԿ գյուղից 0.5 կմ ներքև	-	3.3	-	-	-	-
Գորիսգետ	106	ք.Գորիսից 3 կմ վերև	-	3.5	-	-	-	-
	107	ք.Գորիսից 1.5 կմ ներքև	-	6.3	-	0.106	7.304	-
Երևանյան լիճ	112	Ամբարտակի մոտ	-	3.9	44	0.102	-	-
Կեչուտի ջրամբար	114	Ամբարտակի մոտ	-	4.1	-	-	-	-